ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4.2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 5-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

Ծրագրի հավելված N2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով հաղթող ճանաչված 3 (երեք) կազմակերպությունների՝

- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի

կողմից լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի քննարկում և վերոնշյալ կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում:

Լսեցին՝

1. Հանձնաժողովին ներկայացվեց, որ մրցույթը հաղթող 3 (երեք) կազմակերպություն տրամադրել են լրացուցիչ պահանջված փաստաթղթերը, մասնավորապես՝

- *«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ն՝ լրացուցիչ տեղեկատվություն գրասենյակային տարածքի շահագործման թույլտվության վերաբերյալ,*
- *«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ն՝ Ծրագրի բյուջեի և համապատասխանաբար ֆինանսական նախահաշվի վերախմբագրված տարբերակը,*
- *«Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամը՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի ստորագրված տարբերակը, ինչպես նաև Ծրագրի բյուջեի և համապատասխանաբար ֆինանսական նախահաշվի վերախմբագրված տարբերակները:*

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագրեր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար՝

- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի հետ՝ 11.000.000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,
- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի հետ՝ 9.070.000 (ինը միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով,
- **«Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի** հետ՝ 9.058.600 (ինը միլիոն հիսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____